

ԱՐԵՎԱԿ ԱՐԱՆԴ
ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Ի. Լ. ՎԵԲՈՒԵՐ

ԳՐԱԴԱՐԱՆ
ИНСТИТУТ
ВОСТОЧНОЙ АЗИИ
Академии Наук
СССР

Թ

ԽԵՂԱՏԻԶՄԸ

ՅԵՎ ՆՐԱ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԵԼՈՒ
ՄԻՋՈՑՆԵՐԸ

616.9
Վ - 55

ԱԶԱՎ-ՍԵՎՃԱՎԵՐՆ ՅԵՐԿՐՈՅԻ ՀՐԱՄԱԿԱՐԱԹՅՈՒՆ - 1935

4 AUG 2010

ԱՐԴԱՎ ԱՌՈՂՋ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

~~36-Ա
ՀՀ983
616.9
Կ-55~~

Ի. Լ. ՎԵԲՍԼԵՐ

Արդանիտարիայի յեկ աշխատամբի
հիգիենայի Աղով-Մեծովյան ինստի-
տուտի ի պրոֆիլիանուրջաւնների
կլինիկայի վարիչ

Ո Ե Վ Մ Ա Տ Ի Զ Մ Ը

ՅԵՎ ՆՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐԸ

Պրոֆ. Ի. Վ. ԶԱՎԱԴՄԱԿՈՒ
Խմբագրությամբ

Թարգմ. Հ. ԲՈՂԴԱՆՅԱՆ



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОНОВЛЕНИЯ
Академии Наук
СССР

ԱԶՈՎ-ՍԵՎԱՆՈՎԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՄԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական 1935

09 AUG 2013

7377

ԸՆԿԵՐ ԸՆԹԵՐՑՈՂ,

Հայտնիք ու կարծիքն այս գրքի մասին
հետեւյալ հասցեով.

Гор. Ростов-Дон, Буденновский пр.,
№ 30, Азово-черноморское Краевое
Книгоиздательство, армянская секция.

Նամակները կարելի յե ուղարկել առանց
նամակադրասմի:



59470-66

ԻՆՉ Ե ՌԵՎՄԱՏԻԶՄԸ

ՌԵՎՄԱՏԻԶՄԻ ԾԱԳՈՒՄԸ ՅԵՎ, ԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Հին ժամանակներում մարդիկ կարծում եյին, վոր ռեվմատիզմով հիվանդացած մարդու մարմնի մեջ մի տեսակ զով և բարկ հեղուկ ե գոյանում, վոր գանգուղեղից հոսելով՝ տարածվում ե որդանիզմի բոլոր մասերում և թափառող ու տեղից-տեղ անցնող ցավեր ե առաջացնում: Դրա համար այս հիվանդությունը հունական բառով կոչվում ե «ռեվմա», վոր նշանակում ե «հոսանք»:

Այս հիվանդության ամենազգալի, ամենացայտուն և աչքի ընկնող հատկանիշը՝ հոգերի ուռչումն ե. դրա համար այս հիվանդությունն ել սկսեցին կոչել «հոդային ռեվմատիզմ»:

Վորովհետեւ շատ անգամ նկատված եր,
վոր հոգերի ուռչումը տեղի յեւ ունենում
մըսելուց հետո, դրա համար ել այդ հիվանդու-
թյան գլխավոր պատճառը մըսելն եյին համա-
րում և մինչև անգամ մըսելուց առաջացած
ամեն հիվանդություն ռեվմատիզմ եյին
համարում։

Ժամանակի ընթացքում այս հայացքները
մի քիչ փոխվեցին, բայց հիմնականում տի-
րող մնաց այն կարծիքը, վոր ռեվմատիզմի
եյությունն արդյունք ե մարդու մեջ յեղած
«վատ հյութերին»։ Այստեղից հասկանալի
յեւ, վոր ռեվմատիզմի բուժումն ել հանգում
եր այն բանին, վոր հիվանդին ազատեն այդ
«վատ հյութերից» այնպիսի միջնորդով,
ինչպես են՝ արյունառությունը, կլիզմաները
(հոգնա) և «մաքրող» խաղուէները (ոտվար)։

Այսուհետեւ, յերբ գիտնականները գտան
վիկրօբներ ասված ամենամանրիկ կենդանի
եյակները, վորոնք բազմաթիվ հիվանդու-
թյունների պատճառն են հանդիսանում, —
բժիշկներն աշխատել են գտնել նսակ ռեվմա-
տիզմի կենդանի ախտահարուցին (հիվանդու-
թյունն առաջացնողին)։ Շուտով պարզվեց,
վոր ռեվմատիկ հիվանդությունների մեջ կա-
նըա մի տեսակը, վոր կոչվում ե սուր ռեվմա-

տիզմ և իր ընթացքով տարբերվում ե մյուս
տեսակներից մի շարք առանձնահատկու-
թյուններով։ Միաժամանակ հաջողվեց սահ-
մանել, վոր հիվանդության ժամանակ որ-
դանիզմում առաջանում են բջիջների մի
տեսակ կուտակումներ, վորոնք աչքով չեն
տեսնվում, այլ միայն միկրոսկոպով և ան-
հան մեծության հանգուցիկների ձև ունեն։
Նրանք գտնվում են ներքին շատ որգան-
ներում, բայց ավելի հաճախ՝ ռեվմատիզմով
հիվանդ մարդու սրտում։ Ինչ վերաբերում
ե ռեվմատիզմ հիվանդության այլ ձեվերին,
նրանց ընթացքը բավականաչափ ուրիշ ե.
վերջին տեսակի ռեվմատիզմները մեկ անու-
նով կոչվում են խրոնիկական ունվամտիզմ։

Այս բոլոր հետազոտումներից հետո ներ-
կայումս վորոշված ե, վոր սուր ռեվմատիզմ
առաջացնելու գործում միկրոբները վորոշ
դեր են խաղում, թեև վերջնականապես դեռ
չի լուծված այն հարցը, թե ինչ միկրոբներ
են վրանք։

Բայց մենակ միկրոբի՝ մարդու որգանիզմը
թափանցելու հանգամանքը բավական չե սուր
ռեվմատիզմ առաջանալու համար։ Դրա հա-
մար որգանիզմը պետք ե վորոշ կերպով
«նախապատրաստված» լինի, պետք ե վորոշ

կացության մեջ լինի։ Այդ կացությունն ալերգիա յե կոչվում և արտահայտվում են բանով, վոր հիվանդի զգայնությունը վորոշ նյութերի (սպիտակուցի) նկատմամբ փոխվում է, յեթե այդ նյութերով մտնում են որգանիզմը կրկնաբար և վոչ թե առաջին անգամը, թեկուղ և ամենաաննշան չափերով։ Յեվ որգանիզմն, իր փոխված և հաճախ ավելի ուժեղ զգայնության շնորհիվ, շատ ավելի հեշտությամբ ու արագությամբ ե յենթարկվում հիվանդություն պատճառող միկրոբներին։

Այսպես, բազմաթիվ փորձերը ցույց են տվել, վոր, յեթե ճագարի որգանիզմում արհեստական յեղանակով ավելի ուժեղ զգայնություն առաջնենք ու նրա արյան մեջ 20 հատ միկրոբ մտցնենք, այդ 20 միկրոբը նույնպիսի հիվանդագին փոփոխություններ առաջ կբերեն, ինչպես և 200 000 հատը։ Գերմանացի Կլինգե բժիշկը, ճագարի հոգերում և կաշվի տակ վորոշ նյութերի կրկնակի ներարկումներ անելու հետևանքով, առաջացրել ենույն ճագարի մեջ հոգերի բորբոքումն։ Դրա հետ միաժամանակ կարելի յեղափ ճագարի ամբողջ որգանիզմում հայտնաբերել այլևայլ հարվածումներ և գլխավորապես նունյացիսի

«հանգուցիկներ», վորոնք բոլորովին նման են սուր ուեվմատիզմի ժամանակ գոյացող բջիջների կուտակումներին։

Ուրիշ ե պատկերը խրոնիկական ուեվմատիզմի ժամանակ: Խրոնիկական ուեվմատիզմի պատճառները բազմատեսակ են։ Այդ պատճառներից մի քանիսը գտնվում են հենց իր՝ որգանիզմի մեջ, իսկ մյուս պատճառները որգանիզմից դուրս են։ Սակայն, ինչպես սուր ուեվմատիզմի, այսպես ել նրա խրոնիկական ձեվերի ժամանակ, շատ մեծ դեր են խաղում այսպես կոչված նախատրամադրություն առաջնող պայմանները։

Կ.ԻՄԱՅԻ ՅԵՎ. ՍՈՅԻԱԼ.-ԿԵՆՑԱՂ.ԱՅԵՒՆ ՊԱՅՄԱՆ-ՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուեվմատիզմով հիվանդանալու նախատրամադրող պատճառների մեջ առաջին տեղն անհրաժեշտ ե հատկացնել կլիմայական պայմաններին։ Դրանց մեջ մեծ նշանակություն ունի յեղանակի փոփոխությունը։


Ուեվմատիզմով հիվանդացումների նկատմամբ ակներե և այն կապը, վոր կա նախնական ուեվմատիզմի սկզբնավորության կամ նրա նոպաները (բռնկումները) կրկնվելու և կամ պարզապես հիվանդությունը վատ-

թարանսալու մեջ: Ամենքին հայտնի յէ, վոր նմանորինակ հիվանդներն, իրենց զգացողության ջնորհիվ, գուշակում են մթնոլորտային (ատմոսֆերային) փոփոխությունները:

Բայց կլիմայական պայմանների ազդեցությունն ամենաուժեղ կերպով ե արտահայտվում մըսելու հետեվանքով: Մըսելու պատճառը միայն ցուրտը չե: Մենք գիտենք, վոր հյուսիսի բնակլիչները, չնայած ձմեռվասատկաշունչ սառնամանիքներին, «ցրտառության» չեն յենթարկվում և բավականաշափկութել են իրենց օրգանիզմն այդ հիվանդությունների դեմ: Դրա փոխարեն, մենք ցրտառության դեպքեր հաճախ ենք դիտում նույնիսկ ամառը, շատ շոդ յեղանակներին: Մըս բացատրությունն այն ե, վոր ցրտառությունն արդյունք ե ցած ջերմաստիճանի, ջերմաստիճանների հաճախակի ու շեշտակի փոփոխությունների, ոդի ավելի խոնավության և, վերջապես, միջանցուկ քամիների օրգանիզմի վրա ունեցած համատեղ ներգործության: Նույնպիսի նշանակություն ունեն նաև թրջվելն ու խոնավությունը. սրանց հետեւանքով մարդ կորցնում ե մեծաքանակ տաքություն և հիվանդանում ե:

Վոր կլիմայական պայմաններն ազդում

են ոեվմատիզմով հիվանդացությունների վրա, դրա լավագույն ապացույցը հիվանդացությունների դասավորությն ե ըստ տարվա ամիսների: Ահավասիկ ոեվմատիզմի տարածման կորագիծը մեր յերկրում ըստ ամիսների (տոկոսներով):



Նկ 1. Ոեվմատիզմի տարածությունը ըստ ամիսների:

Այս գծվածքից յերելում ե, վոր ոեվմատիզմով հիվանդացությունների մեծագույն քանակն ընկնում ե վոչ թե տարվա ամենացուրտ ամիսներին (դեկտեմբեր, հունվար),

այլ այն ամիսներին, յերբ յեղանակները շեշտակի փոխվում են, փշում են քամիները, յելևեջներ ե անում ողի ջերմաստիճանը և շատ խոնավություն ե առաջանում: Մեզ մոտ այդպիսի յեղանակներ լինում են հաճախ փետրվար — մարտ ամիսներին, ապա՝ նոյեմբերի փերջերին և դեկտեմբերի սկզբներին, այդ ամիսներին ե, վոր հիվանդացումների տոկոսն ել ամենից ավելի յե բարձրանում (գծվածքի վրա հիվանդացումների ամենաբարձր թիվը նշված ե մարտ ամսին և արտահայտված ե 100 թվանշանով, իսկ մյուս ամիսներինը — 100-ի տոկոսական հարաբերությամբ):

Յերկրորդ պայմանը, վոր նախատրամադրում ե ոեվմատիզմով հիվանդացումների, այսպես կոչված պրոֆեսիոնալ վճառակարությունն ե, վոր կապված ե աշխատանքի պայմանների հետ, ինչպես նաև բանվորական վորոշ խմբերի արտադրական իրադրության հետ, այսպես ե, քրտինք պաղեցնելը, միջանցուկքամիները, խոնավությունը, ինչպես նաև ծանր ֆիզիկական լարվածությունը:

Ոտարերկրյա հեղինակների տվյալների համաձայն, արտասահմանում, աղյուսի գործարանների բանվորների միջև, վորոնք խիստ

յենթարկված են միջանցուկքամիների ու խոնավության, այլ հիվանդությունների կարգում ոեվմատիզմով բռնում ե առաջին տեղը: Լվացարարուհիները հիվանդանում են ոեվմատիզմի ամեն տեսակներով, վոր բացատրվում ե մի քանի մկանների սաստիկ հոգնածությամբ, նմանապես մրսելով և թրջվելով: Ստորերկրյա շինարարությունների բանվորները Գերմանիայում, ամբողջ ժամանակի խոնավության մեջ աշխատելով, 100-ից 84 հոգին, 35-ից մինչև 54 տարեկան, հիվանդանում են ոեվմատիզմով:

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում ահազին աշխատանք ե տարվում պրոֆեսիոնալ վճառակարությունները վերացնելու համար, վորի հետեւանքով զգալի չափով պակասել են դրանց հետ կապված հիվանդացումները և մասնավորապես — ոեվմատիզմով հիվանդացումները:

Յեթե մենք հետազոտելու լինենք ոեվմատիզմով հիվանդացումների դասավորությունն ըստ առանձին պրոֆեսիոնալ խմբերի, ոգտվելով այն մատերիալից, վորը մասնագետներ վերաբերում ե ցարական նույսաստանին, ապա կստանանք հետեւյալ պատկերը.

Առաջին շարքերը բռնում են այն պրոֆեսիաները, վորոնք անխուսափելիորեն կապ-

գած են ջերմաչափի շեշտակի յելենների
(հանկարծակի սաստիկ տաքանալը և պա-
ղելը) և ողի խոնավության հետ Դրանք են՝
հրշեցները, հանքագործները, կոնդուկտոր-
ները, շոգեշարժների մեքենավարները, սլա-
քավարները, հացթուխները, Այնուհետև գա-
լիս են բանվորների այն խմբերը, զորոնց
աշխատանքը կապված է առաջին մկանների
և հողերի գերալտրվածության հետ՝ ծանր
աշխատանք կատարելիս կամ քայլելիս:
Դրանք են՝ բեռնիչները, բեռնակիրները, սե-
վագործ բանվորները, զորմագիրները, փոս-
տատարները: Վերջին տեղն են բռնում այն
պրոֆեսիաները, զորոնք համարյա բոլորովին
յենթարկված չեն վերոհիշյալ վնասակարու-
թյուններին: Դրանք են՝ տպագրիչները, դեր-
ձակները, ջուլհակները, փականագործները:

Կրկնում ենք, զոր վերեվ հիշված տվյալ-
ները վերաբերում են մեր անցյալին: Սո-
ցիալիստական շինարարության ընթացքում
մեր Փաբրիկների, գործարանների, հանքա-
հորերի և կոլխոզների աշխատանքի պայ-
մաններն ամեն ժամ ահագին փոփոխու-
թյունների յեն յենթարկվում: Աշխատանքի
պայմանների առողջացման, արտադրական
պրոցեսների մեքենայացման, սոցիալիստա-

կան արդյունաբերության նորակառույց
հսկաների շնորհիվ շատ պրոֆեսիաներ, վո-
րոնք առաջ հարուստ եյին ուեվմատիզմի հի-
վանդություններով, այսոր արդեն լիովին
բարեհաջող վիճակ ունեն այդ կողմից:
Ուեվմատիկ հիվանդացումներ նախատրա-
մադրող յերրորդ պայմանը պետք է համա-
րել անբարեհաջող կենցաղային պայման-
ները և գլխավորապես՝ խոնավ, ցուց յեվ
մութ բնակարանները: Բնակարանների պա-
ղությունն ու խոնավությունը յերբեմն պատ-
ճառ են հանդիսանում ուեվմատիզմի ասսո-
կանալուն, յերբեմն ել նրանց շնորհիվ հիվան-
դությունը յերկարում է և բարդություններ
եւ գւնենում:

Անհրաժեշտ է մատնացույց անել և այն,
զոր կան մարդիկ, վորոնք անձնական նա-
խատրամադրություն ունեն ուիվմատիզմով
հիվանդանալու, ու այդ մարդիկ՝ ավելի հա-
ճախ են հիվանդանում ուեվմատիզմով, քան
թե ուրիշները:

Վորոշ նշանակություն ունի նմանապես
ժառանգականությունը: Կան ընտանիքներ,
ուր ուեվմատիզմը ավելի հաճախ եւ պատա-
հում, քան այլ ընտանիքներում, չնայելով,
զոր այդ ընտանիքների անդամներն իրարից

անջատ են ապրում: Այսպես, նորերս արդ-
սանիտարիայի և աշխատանքի հեղինակյի
թուտովի ինստիտուտի կլինիկայում դիտ-
ված ե յերեք յեղոր և մոր տարբեր ժա-
մանակներում սուր հոգային ռեվմատիզմով
հիվանդանալու զեպք, թեև դրանք բոլորն
ել ապրում եյին իրարից անջատ, քաղաքի
տարբեր ծայրերում: Այստեղ հետաքրքրա-
կան ե նաև այն, վոր հիվանդության յելքը
յերեքի համար ել յեղել ե միենայնը, այ-
սինքն առաջացել ե սրտի արատ:

ՍՈՒՐ ՅԵՎ ԽՐՈՆԻԿԱԿԱՆ ՌԵՎՄԱՏԻԶՄԻ ԸՆԹԱՑՔԸ

ՍՈՒՐ ՌԵՎՄԱՏԻԶՄԸ

Տարբեր ձեռքի ռեվմատիզմային հիվան-
դացումներ են լինում: Դրանից ամենավո-
րոշ ու ցայտուն կերպով արտահայտվողը
սուր կամ իսկական ռեվմատիզմն ե:

Սուր ռեվմատիզմով բռնվելուց միքիչ ա-
ռաջ, հիվանդը մեծ մասսամբ ունենում է
անզինա կամ զրիպ՝ հետն ել հարբուխ և
հազ: Մի քանի որից կամ նույնիսկ յերկու-
յերեք շաբաթից հետո, յերբ վերոհիշյալ

հիվանդությունը կարծես բոլորովին արդեն
անցել եր, հիվանդը հանկարծ սկսում է
խիստ գողացնել, ապա բարձրանում ե տա-
քությունը մինչև 39—40 աստիճան. դրա
հետ համարյա միաժամանակ կամ հետե-
յալ որն սկսվում է հոդերի բորբոքումը:

Հոգերի հիվանդությունը նախ և առաջ
արտահայտվում է սուր ցավերով, մանավանդ
ամենափոքր շարժողության ժամանակ: Աչքի
յե ընկնում հիվանդի ցավերից տանջվող
դեմքը ու մարմի բռնադատական դիրքը:
Ցավերի սաստկությունը մեղմելու նպատա-
կով՝ նա աշխատում է իր բորբոքված հոգին
այնպիսի գերք տալ, վոր բոլորովին չշարժվի.
յերբեմն անկողնի կամ վերմակի նույնիսկ
թեթև շարժումից կամ հպումից հիվանդը
տանջալից ցավեր է զգում: Հոգերի ցավերը
սովորաբար գիշերներն են սաստկանում,
վորի պատճառով ռեվմատիզմով հիվանդները
հաճախ կորցնում են իրենց հանգիստն ու
քունը:

Բայց բանը միայն ցավերով չի սահմա-
նափակվում. բորբոքված հոդը (իսկ յերբեմն
նաև շրջապատող հյուավածքները) նկատելի
կերպով ուռչում է, կամ բուրմում, փոխում է
իր ձեվը և շոշափելիս՝ տաքացած ե լինում:

Հողերի հիվանդությունը սուր ռեվմատիզմի ժամանակ մի ուրիշ բնորոշ աւանձնահատկություն ել ե ունենում. ամենից հաճախ այդ հիվանդությունն սկսվում ե խոշոր հողերից, սովորաբար ստորին վերջավորություններից, հարվածում ե միանգամից միքանի հողեր յերկու կողմերից, բորբոքումը զարգանում ե ավելի կամ պակաս արագությամբ և նույնպիսի արագությամբ ել դադարում ե, մի հողից մյուսի վրա անցնելով և կրկին հարվածելով առաջիններին: Ահա այս տեղից ե հիվանդության այս ձեփի շատ տարածված «թափառող ռեվմատիզմ» անունը:

Բորբոքումը կարող ե հարվածել որգանիզմի բոլոր հողերին, բայց ամենից հաճախ հիվանդանում են ստորին և վերին վերջավորությունների հողերը:

Սուր ռեվմատիզմը յերբեմն այլ կերպ ե սկսվում. առաջին տեղը բռնում ե բարձր ջերմաստիճանը, քրտնոտությունը, ընդհանուր թուլությունը, ախործակի բացակայությունը, այսպես վոր ինչ-վոր տիֆային հիվանդության պատկեր ե ստացվում: Բայց շուտով դրանց միանում են հողերի հիվանդացումները, և այն ժամանակ արդեն պարզվում ե հիվանդության բնույթը:

Հինում են դեպքեր, յերբ սուր ռեվմատիզմը բոլորովին չի հարվածում հողերին, այլ հիվանդությունը զլխավորապես անցնում ե ներքին որգաններին և հատկապես՝ սրտին և անոթներին, դրա համար ել ներկայումս այս հիվանդությունը կոչվում ե վոչ թե «հողային ռեվմատիզմ», այլ պարզապես «ռեվմատիզմ». Այսպիսի դեպքերում հիվանդը, նախ և առաջ՝ զգում ե ընդհանուր տկարություն, վերջավորությունների թեթև քաշը ցավեր, շարժվելու ժամանակ հողերի մի տեսակ թեթև կարկամություն, ջարդվածություն ամբողջ մարմնում, դանդաղկոտություն, անզորություն և արագ հոգնածություն: Բացի սրանից, քիչ ժամանակ անցնելուց հետո, կարող են առաջանալ հատ. հատ հողերի կամ միաժամանակ շատ հողերի հիվանդություններ:

Սուր ռեվմատիզմի յերկրորդ շատ կարեվոր հատկանին ե հիվանդի մարմնի ջերմասինանի բարձրանալը: Զերմաստիճանի բարձրանալը սավորաբար զուգորդված ե հողերի հիվանդացման հետ. Զերմաստիճանը յերեկոները բարձրանում ե 39—40 աստիճանի և առավոտներն իջնում ե նորմալ աստիճանին: Վորքան շատ հոգեր են հարվածված, վորքան



ավելի ուժզնապես և յերկար ժամանակ բոր-
բոքված են յեղել, այնքան ավելի համառու-
թյամբ շարունակվում ե տաքությունը. հո-
գերի բորբոքումը խաղաղվելու դեպքում,
յեթե ներքին որգանները չեն հիվանդացել —
ջերմաստիճանն իջնում ե կամ մի անգամից
կամ աստիճանաբար: Խեթև դեպքերում հի-
վանդությունը դրանով ել կարող ե վերջա-
նալ, ընդամենը 5 — 10 որ շարունակվելուց
հետո:

Բայց շատ հաճախ, առաջին բռնկումից
հետո, յերբ հիվանդը կարծես բոլորովին ար-
դեն առողջացել ե, հիվանդությունը նորից
ե սուր կերպարանք ստանում և հարվածում
ե ինչպես նոր, այնպես ել արդեն հիվանդա-
ցած հողերին, նույնպիսի բարձր տաքու-
թյուն առաջացնելով: Հողերի ցավերն անց
նելուց հետո միայն, յերբ ջերմաստիճանը
դառնում ե նորմալ ու ալգապես շարունակ-
վում ե մնալ վոչ պակաս, քան 2 շաբաթ, —
կարելի յե յենթադրել, թե հիվանդությունը
խաղաղվել ե:

Սուր ոեվմատիզմի յերրորդ կարեվոր հատ-
կանիշը, մանավանդ, յերբ հարվածված են
հողերը, պետք ե համարել հիվանդների չա-
փազանց frsնությունը: Այդ քրտնուու-

թյունը հետեւվանք չե հիվանդի ընդունած
այլեայլ դեղերի և ավելի աչքի յե ընկնում
գիշերվա յերկրորդ կեսին, յերբ սովորաբար
ջերմաչափն իջնում ե:

Սուր ոեվմատիզմի չորրորդ, շատ լուրջ
հատկանիշը արժի նիվանդացումն ե: Բազմա-
թիվ դեպքերում, հիվանդության յերկրորդ
շաբաթից կամ ավելի ուշ, հիվանդի վրա յերե-
փում են նշաններ, վորոնք գալիս են վկայելու,
վոր նրա զանազան ներքին որգանները հի-
վանդացել են: Այդ հիվանդությունները սո-
վորաբար կայուն չեն լինում. Նրանք արա-
գորեն վրա յեն համառում, գնալով սաստկա-
նում են և, մեծ մասսամբ, նույնպես արագ
և անհետ անցնում են: Բացառություն են
կազմում սրտի հիվանդությունները, վորոնք
հաճախ մնայուն բնույթ են ստանում և կա-
րող են հարվածել թե սրտի մկանները և թե
նրա թաղանթները: Սրտի հիվանդացումների
դեպքում, յերկար ժամանակվա ընթացքում,
ջերմաչափը սովորաբար մինչև նորման չի
իջնում:

Սուր ոեվմատիզմով մի անգամ հիվանդա-
ցած մարդը վոչ միայն անզգայունակ չի
դառնում այդ հիվանդությամբ կրկին հիվան-
դանալու, այլ ընդհակառակը շատ ուժեղ

Նախատրամադրություն ե ունենում նորից
հիվանդանալու։ Այս բնորոշ առանձնահատ-
կությունը միշտ պետք ե ինկատի ունենալ։
Հեղինակների մեծամասնությունը կրկնվող
բռնկումները հաշվում ե 20—30%, այսինքն՝
սուր ոեվմատիզմով յերբեք հիվանդացած
100 հոգուց 20—30 հոգին հետագայում
նորից են հիվանդանում։ Մեկ բռնկումից
մինչև մյուս բռնկումը բռնող ժամանակա-
միջոցը տարբեր է լինում ըստ տեվողության,
այսինքն մի քանի որից սկսած մինչև տաս-
նյակ տարիներ։ Վորքան ծանր եր յեղած
առաջին անգամվա հիվանդությունը, այն-
քան հաճախ ել յերբեմն կրկնվում են նոպա-
ները (պրիստուլ), մանականդ, յեթե առաջին
հիվանդության ժամանակ տեղի յեր ունե-
ցել նաև սրտի ներքին թաղանթի բորբո-
քումը։

Անհրաժեշտ ե նշել, վոր կրկնվող հիվան-
դությունների ժամանակ հոգերի բորբոքումն
այնքան ուժեղ չի լինում, բայց դրա փոխա-
րեն ավելի սուր են արտահայտվում ցավա-
գին յերեվույթները սրտի կողմից։ Ընդհանրա-
պես պետք ե ասել, վոր սուր ոեվմատիզմի
և նրա կրկնվող բռնկումների ժամանակ
ամենախոշոր դերը կատարում ե հենց ար-

յան շրջանառության որգանների՝ սրտի, նրա
մկանների և փականների, ինչպես և ար-
յունատար անոթների հիվանդություննը։ Ահա
թե ինչու ոեվմատիզմով հիվանդները հա-
ճախ արժի արած են ունենում։

Բացի գրանից, սուր ոեվմատիզմը մի քանի
դեպքերում բարդություններ ե առաջ բե-
րում մյուս ներքին որգանների, ինչպես և
ներվոյին սիստեմի վրա։ Ամենից հաճախ
կաշին ե հիվանդանում։ Սուր ոեվմատիզմով
հիվանդների վրա հաճախ «քրտնացան» ե
առաջանում, վոր կապված ե սաստիկ քրտնքի
և բարձր ջերմաստիճանի հետ։ Բացի «քրտնա-
ցանից», կաշին ուրիշ ցաներ ել են դուրս
գալիս։ Հատուկ ուշադրության են արժանի
յերեմնապես առաջացող, այսպես կոչված
«ոեվմատիզմային հանգուցիկները»։ Կաշի
տակ նստած այս հանգուցիկները հաճախ
դուրս են գալիս այն ժամանակ, յերբ հո-
գերի հիվանդությունները խաղաղվում են։
Նրանց դուրս տալու ժամանակ տաքությունը
չի բարձրանում։ Հանգուցիկներն աննշան
մեծություն ունեն՝ — կորեկի հատիկից մինչև
սիսեռահատիկի չափ, և հազվագյուտ դեպքե-
րում միայն՝ ավելի մեծ։ Նրանք սովորա-
բար լինում են հիվանդության ծանր դեպ-

բերում, հաճախ 20 ապրեկանից փոքր անձանց մոտ և՝ ավելի ևս հաճախ՝ թուլակազմ յերեխաների վրա:

Ծնչուղիների կողմից յերբեմն կարելի յեղիտել թոքերի թույլ ընթացք ունեցող բորբոքումներ, վորոնք հիվանդության ընդհանուր ընթացքի վրա քիչ են ազդում: Արյան մեջ նշգում են մի շարք փոփոխություններ, վորոնք վորոշ նշանակություն ունեն ռեվմատիզմային հիվանդության ընթացքը և նրա յելքը վորոշելու գործում:

Յուրատեսակ ե ընթանում սուր կամ իսկական ռեվմատիզմով հիվանդացումը մասնուկ հասակում:

Ռեվմատիզմով հիվանդ յերեխաների հոգերի հիվանդացումները մեծ դեր չի խաղում: Նրանք շատ շուտով անցնում են ու փոչ մի հետք չեն թողնում իրենց հետեւից: Շատ քիչ ե պատահում, վոր այս հիվանդացումները տեսվական, խրոնիկական ընթացք ունենան: Ռեվմատիզմն իր գլխավոր հարվածը հասցնում է յերեխաներին՝ նրանց սրայալի անօրային, նույնական յեվ ներվային սիստեմի ուղղությամբ:

Յերեխաների սրտի հիվանդությունն անցնում է ինչպես մկաններին, այսպես ել նրա

ներքին և արտաքին թաղանթներին: Սրտի հիվանդությունը, սուր նոպան անցնելուց հետո ել, կարող ե շարունակաբար զարգանալ, բայց հաճախ սրտի ծանր խանգարումներն արագությամբ դադարում են և յերեխան իրեն բոլորովին առողջ ե գտում:

Ներվային սիստեմի հարվածումը գլխավորապես արտահայատվում է մարմնի զանազան մկանների՝ և հատկապես ձեռքի մատների և ապա դաստակի մկանների ակամացնցումներով (այս հիվանդությունը խորեայն կոչվում): Մանկական խորեան մեծ մասմբ ռեվմատիկ ծագում ունի և համարյամիշտ սրտի հիվանդությամբ ե գուգորդվում:

Ռեվմատիզմով հիվանդանալու ժամանակ, յերեխաների մոտ ավելի հաճախ, քան մեծերի մոտ, կաշվի տակ առաջանում են այսպես կոչված «ռեվմատիզմային հանգուցիկներ», վորոնք ուրիշ հիվանդությունների ժամանակ չեն դիտվում: Յերբ ռիվմատիզմն սկսվում ե շատ վաղ հոտակում, ապա հիվանդության ընթացքը բավական անբարեհաջող ե լինում. յերբեմն նաև շատ արագ ու ծանր ե ընթանում և կարող ե 3—8 շաբաթվա ընթացքում մահով վերջանալ:


ԵՐՈՆԻԿԱԿԱՆ ՌԵՎՄԱՏԻԶՄԻ

Այս հիվանդությունը յերբեմն սկսում է սուր ռեվմատիզմի բանկումից հետո. այս դեպքում սուր ռեվմատիզմը փոխվում է խրոնիկականի և ժամանակ առ ժամանակ մի քիչ սուր կերպարանք ե ընդունում: Խրոնիկական ռեվմատիզմը շատ անգամ սկսում է աննկատելի կերպով, աստիճանաբար և ունենում է գանդաղ, բայց շատ տեփական ընթացք:


Հիշատակված հիվանդության առաջին նշաններն են հոդերի ցավերը, յերբ նրանց կզյում ենք կամ՝ շարժում, և նույնպես նրանց ծանրաւարժությունը: Այս ծանրաշարժությունն առանձնապես զգալ ե տալիս իրեն այն դեպքում, յերբ դրանից առաջ մի առժամանակ հոգն անշարժ երթողնված: Դրա համար ծանրաշարժությունն ավելի ուժեղ կերպով ե արտահայտվում առավտները, գիշերային հանգստից հետո: Այս ցավերը յերբեմն այրող բնույթ են կրում:

Յերբ խրոնիկական ռեվմատիզմը հասնում է իր զարգացմանը, այն ժամանակ յերեվան են գալիս նաև ուրիշ նշաններ, ինչպես հոգերի ճթթոց և կրծտոց, վորը շոշափելիս

դրացվում ե, յերբեմն ել հեռվից լսվում: Այնուհետև նկատվում է հոգերի ուռչումը և



Նկ. 2. Բաղմանյատ ռեվմատիզմով հիվանդի դաստակն ու մատները:



Նկ. 3. Զեռքերի այլանդակումը խրոնիկական ռեվմատիզմի ժամանակի:

վերջապես նրանց ձևափոխումը, վոր հաճախ այլանդակության սուր աստիճանի յեհանում:

Դրա հետ միասին, քանի գնում՝ ավելի և
ավելի յե պակասում հոդի շարժությունը,
վորը յերբեմն վերածվում ե լիակատար ան-



Նկ. 4. Վոռքերի հողերի այլանդակումը Խրոնիկական ռեվմա-
տիզմի ժամանակ:

շարժության: Խրոնիկական ռեվմատիզմի ժամանակի կարող են հիվանդանալ հոդի վոչ
միայն փափուկ մասերը, այլ և կոճիկն ու
վոսկը:

Խրոնիկական ռեվմատիզմի ժամանակ,
բացի հոգեթից, մարմնի մյուս որդանները
համարյա բոլորովին չեն հիվանդանում:
Բացառություն են կազմում միայն մերձա-
վոր մկանները, վորոնք հաճախ շատ բար-
կանալով դառնում են անզոր, հետեաբար
և նվազ աշխատունակ. նրանք, ինչպես ասում
են, առողջիւթամբ են, այսինքն հյուծվում —
բայց յայգում են:

Ներքին որդանները սովորաբար չեն ֆսա-
փում: Չափազանց քիչ են լինում որտի արատ-
ները, այն ել խրոնիկական ռեվմատիզմի այն
գեղեցիում միայն, վորոնք զարգացել են
ռեվմատիզմի սուր կամ իսկական տեսակից:
Խրոնիկական ռեվմատիզմը մեծ մասամբ ըն-
թանում է առանց տենդի (ջերմի):

ՌԵՎՄԱՏԻԶՄԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Սուր ռեվմատիզմի բուժման գլխավոր պայ-
մանն ե՝ փորքան կարելի յե շուտ նիվանդին
նիվանդանոց տեղավորել:

Հիվանդության ամբողջ ընթացքում հի-
վանդն անպատճառ պետք ե անկողին պառկի-
տյղ անրաժեշտ և վոչ միայն ջերմատի-
ճանը բարձր լինելու պատճառով, այլև այն

դեպքում, յերբ վսասված են ներքին որգան-ները, մանավանդ սիրտը: Ժամանակից առաջ, առանց բժշկի թույլտվության անկողնից վերկենալու պատճառով՝ կարող ե հիվանդությունը նորից բռնկվել, կամ վոչ ցանկալի վորեկ բարդություն առաջանալ:

Վորովինետև ոեվմատիզմով հիվանդները չափազանց զգայունակ են ցրտի հանդեպ, այլ և նկատի ունենալով, վոր նրանք հաճախ խիստ շատ են բրտնում, անհրաժեշտ ե նրանց պահպանել միջանցուկ բամիներից: Հիվանդները պետք ե հագնված կամ ծածկված լինեն տաք շորերով, բայց վոչ ծանր: Անհրաժեշտ ե անպատճառ ուշադիր խնամք տանել հիվանդի բերանին (վողողում, ատամների մաքրումը), կաշվին (որինակ՝ հոտափետ քացախով կամ տաք ջրով մարմինը սրբել) և շուտ-շուտ ձերմակեղենը փոխել:

Դեղերով բուժումը կատարվում է բժշկի ձեռներով և կախված է հիվանդի ընդհանուր կացությունից: Ոգուա են տալիս սալիցիլի պրեպարատները, յեթե տրվում են մեծ քանակությամբ: Սալիցիլի պրեպարատները յերբեմն վատ են ազդում հիվանդների վրա. այդ դեղն առաջացնում է ականջների դժողոց,

դիմապառույտ, սրտախանում և այս դեպքում բժշկը փոխում է դեղը և փոխարենը համապատասխան ուրիշ գեղեր և տալիս: Շատ կարեկոր ե բժշկությունն սկսել հիվանդության հենց սկզբից և քիչ-շատ տեվական անել այն: Այն ընդհանրացած կարծիքը, թե սալիցիլը վատ ե ազդում սրտի վրա, ճիշտ չէ: Զբաբեռությունը և մանավանդ ցեխարությունը թույլատրելի յեն այն դեպքում, յեթե բոլորովին և տեվական կերպով խաղաղվել են հիվանդի այնպիսի հիվանդացին յերեվույթներն, ինչպես են՝ տաքության բարձրանալը, սրտի անհանգիստ լինելը և այլն:

Խրոնիկական սեվմատիզմը բուժելիս՝ գրլիսափոր ուշադրությունն անհրաժեշտ է դարձնել հիգիենական (առողջապահական) ընդհանուր միջոցառութների վրա. ընակարանը պետք ե տաք լինի և չոր. յերբեմն ցանկալի յենույնիսկ բնակության վայրը և կլիման փոխել. հիվանդները պետք ե տաք հագնվեն, բայց միևնույն ժամանակ հարկավոր չե բընքուշության սովորեցնել, ինչպես այդ հաճախ պատահում ե. յերբեմն հանձնարարվում ե հետևել բժշկի կողմից սահմանված հատուկ մննդին: Անհրաժեշտ է հետեւել կաշվի

հիդիենային. շատ ոգտակար են ֆիզկուլ-
տու բայի վորոշ տեսակները:

Բազմատեսակ են դեղային բուժամիջոց-
ները, սակայն նրանց զործադրումը կախված
է հիվանդացման պատճառներից:

Մեծ նշանակություն ունի տեղային,
այսինքն ուղղակի հոգերի բուժումը, վոր
կայանում և զլիսավորապես տաքի, ելեկ-
տրականության, մասաթի և այլնի կիրառ-
ման մեջ:

Խրոնիկական ուեզմատիզմի բուժման վոր-
ծում ահազին դեր ե խաղում բնության
ուժերի՝ նաև ային ցերեկ, ցելսերի, լույսի
յեվ այլնի ոգտագործումը: Բարեհաջող ներ-
գործություն են անում հասարակ տաք վան-
նաները, սոճու եքստրակտի (հյութի) վան-
նաները, աղի վաննաները. այս բոլոր վան-
նաներն ել կարող են պատրաստվել յուրա-
քանչյուր տան մեջ: Լավ են ազդում ափազի
վաննաները՝ թե ընդհանուր և թե տեղային՝
ձեռքերի և վոտքերի համար:

Խրոնիկական ուեզմատիզմի բուժումը լայն
ծավալ ե ստացել ցեխային և ծծմբային
կուրորտներում: Հանձնարարվում ե վաննա-
յով և ցեխով բժշկվել Յեսենտուկում, Ժելեզ-
նովոդուկում, Սլավյանսկում, Լիպեցկում և

Ստարայա Ռուսսայում, ցեխով բժշկվել —
Յեվպատորիայում, Սաքիում, Ոգեսայում,
Բերդյանսկում. ծծմբի վաննաներով բժշկ-
վել — Պյատիգորսկում, Գորյաչեվոդուկում,
Մացեստայում, Սերնովոդուկում, Յեյսկում:
Ծծմբի աղբյուրներ շատ կան Վրաստանում,
Դաղաստանում: Վերջին ժամանակներին
ուշագրություն ե գրավել վրացական Ցիալ-
տուբո կուրորտը:

Միայն հիվանդության ընթացքում չե, վոր
ուեզմատիզմով հիվանդը կարիք ունի մեծ
ուշադրության: Զափազանց կարեվոր և այս-
պիսի հիվանդի ապրելակերպը և՝ այն ժա-
մանակ, յերբ հիվանդության բոնկումներն ու-
սրությունն անցել են, և նա ըստ յերեվույ-
թին բոլորովին առողջ և Հիմնական խնդիրն
ե՝ ամեն կերպ ամեացնել որգանիզմը, մար-
մինը սովորեցնել ջերմաստիճանի այլայլ
տատանումներին, կանոնավոր կյանք վարել,
հրաժարվել ամեն տեսակ ավելորդ բաներից
(ալկոհոլ և այլն): Անհրաժեշտ և խուսափել
քրտինք պապեցնելուց, մանավանդ սաստիկ
ֆիզիկական լարվածությունից հետո (որի-
նակ՝ քրտնած վիճակում ցրտում կամ քամու
տակ չմնալ), անրաժեշտ ե խուսափել մտա-
վոր և ֆիզիկական սաստիկ հոգնածությու-

նից։ Այնուհետև անհրաժեշտ է անցնել զանազան որգանների խրոնիկական հիվանդությունների բուժմանը, թեկուղ այդ հիվանդություններն առանձին անհանգստություն չպատճառեցին ոեվմատիզմով հիվանդին։ Այստեղ խոսքը փչացած առանձների, նշագեղձերի և այլնի բուժման մասին ե։ Զափազանց կարեվոր ե զգուշ լինել՝ գրիպով, անգինայով և այն չհիվանդանալու համար։ Մեկ խոսքով՝ ոեվմատիզմ ունեցողը պետք է ուշադրով հետեւի անձնական նիզինեայի բոլոր կանոններին, վորպեսզի հիվանդությունը չվերսկավի կամ համենայն դեպս ավելի ուշուշ սուր կերպարանք ստանա։

ՈԵՎՄԱՏԻԶՄԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Ոեվմատիզմի հիվանդությունները շատ մեծ և համատարած ծավալ են ստացել համարյա ամբողջ աշխարհում։ Նրանք հայտնի յեն կլիմայական ամենատարբեր պայմաններ ունեցող բոլոր յերկրներում։ Սակայն ոեվմատիզմն ամենից շատ յերեվան և գալիս այն մարդերում, վորոնք բարեխառն և խոնավ կլիմա ունեն, արեվադարձային յերկրներում

և բեվեռային լայնություններում նա քիչ ե պատահում։

Բեռլինի հիվանդանոցային դրամարկղի 1925 թվի տվյալներից յերեվում ե, վոր Բեռլինի բանվոր բնակչության մեջ, նրանց սեռից անկախ, սուր հոգային և մկանային ուեվմատիզմի հիվանդությունները կազմում են ընդհանուր հիվանդացումների համարյա մեկ տասներորդ մասը։ Թեև այս թիվը շատ մեծ ե, բայց և այնպես նա լիովին չի համապատասխանում իսկությանը, վորովհետև Գերմանիայում գոյություն ունեցող կարգերի համաձայն ապահովագրական թոշակների վճարումներն սկսվում են 4-րդ որից, իսկ նմուն պայմաններում հիվանդության բազմաթիվ դեպքեր, յերբ աշխատունակությունը կորցնելը տեվական բնույթ չունի, իսպառ դուրս են մնում հաշվարկից։

Բացի սրանից, այս բանին նպաստում են նաև ապահովագրական թոշակի շատ ցածր դրույցները, վորոնք բնորոշում են սոցիալական ապահովագրության կապիտալիստական սիստեմը և ստիպում են բանվորներին շարունակել իրենց աշխատանքը, մինչև իսպառ հայից ընկնեն։


Մյուս յերկրների մասին մեր ունեցած

տեղեկություններն ել վկայում են, վոր սեփականդությունները շատ են տարբածված:

Ի՞նչքան ե տարածված ռեվմատիզմը մեղմութ, ԽՍՀՄ-ում:


Ռեվմատիզմի հիվանդությունների աշխարհագրական դասավորությունը ԽՍՀՄ-ում հետևյալ պատկերն են ներկայացնում: Նրանք ամենից քիչ պատահում են Միովիշյան միջին գոտուն պատկանած վայրերում, Միջին և սոսորին Պովոլժյեյում, Ուկրաինայի մեծ մեծ մասում և Ազով-Սևծովյան յերկրամասի տափաստանային ոայոններում: Ռեվմատիզմով ավելի շատ են հիվանդնում մեր հայրենիքի հյուսիս-արևելյան մասում, Ուրալում, Բելուսուսիայում, Սև ծովի առափնյա վայրերում և Կովկասի լեռնոտ տեղերում: Հարակցված քարտեզը պատկերացնում է ռեվմատիզմի տարածումը ԽՍՀՄ-ում (տես նկ. 5):

ԽՍՀՄ-ի մի շաբթ քաղաքներում և գյուղերում, ռեվմատիզմը լայն ծավալ և ստացել: Որինակ, ըստ 1925 թվի տվյալների, այդ հիվանդությունների թիվը Մոոկվայում նույն ինկ տուբերկուլոզային (բարկացավի) հիվանդություններից ել մի քիչ ավելի յեր,



Նկ. 5. Ռեվմատիզմի աշխարհագրական տարածումը ԽՍՀՄ-ում:

իսկ Տվերում տուբերկուլոզային հիվանդություններից յերկու և կես անգամ ավելի (տես նկ. 6): Ռեվմատիզմը Ռեկրայինայում ել յերկու և կես անգամ ավելի յե տարած-




Նկ. 6. Ռեվմատիզմը և տուբերկուլոզը:

ված, քանի տուբերկուլոզը: Հենինզրագում բոլոր ապահովագրվածների վոչ պակաս քան 3^{1/2} տոկոսը հիվանդ են ռեվմատիզմով և միաժամանակ կորցրել են իրենց աշխատունակությունը: Դոնբասում սուր հոգային ռեվ-

մատիզմ ունեցող ստորերկրյա բանվորների թիվը 3 տոկոսի յե հասնում և այլն:

Ռեվմատիզ հիվանդությունների նշանակությունն ավելի ես մեծանում ե նրա համար, վոր այդ հիվանդությունը շատ խոր հետք ե թողնում մարդու որգանիզմի մեջ, իսկ մի շարք դեպքերում աշխատավորին բոլորովին ել դուրս ե գցում շարքերից, ինվալիդ (հաշմանդամ) դարձնելով նրան:



Նկ. 7. Ժամանակավոր անաշխատունակություն ռեվմատիզմի հետևանքով (ընդհանուր անաշխատունակության տոկոսային հարաբերություն):

Հաստ անգլիական առողջապահության մինիստրության տվյալների, Անգլիայում 1922 թվին յուրաքանչյուր 6 ինվալիդից մեկը ռեվմատիզմի հետևանքով եր ինվալիդ դարձել: Շվեդիայում, 1918 թ. տվյալներով, ինվալիդության պատճառներից 20 տոկոսը

Խրոնիկական ռեվմատիզմն եւ Դանիայում
ինվալիդությունն՝ իբրև ռեվմատիզմի հետեւ-
վանք՝ կազմում եւ 14 տոկոս, և այլն:

Մեզանում, ԽՍՀՄ-ում, ըստ 1925 թվի
տվյալների, ռեվմատիզմի հետևանքով ինվա-
լիդները կազմում ենին ինվալիդների ընդ-
հանուր թվի 5 տոկոսը, այսինքն՝ մենք ունե-
ցել ենք շատ ավելի փոքր ցուցանիշներ,
քան թե կապիտալիստական յերկրներում:
Վերջին տասնամյակում այս թվերը ԽՍՀՄ-ում
ավելի ևս պակասել են, բայց և այնպես
ռեվմատիզմի նշանակությունը, վորպես
ինվալիդության պատճառի, տակավին բա-
վական բարձր եւ (տես նկ. 7), հետևա-
բար այս ուղղությամբ մենք պետք եւ հա-
մառ յեվ սիստեմատիկ պայմար մղենի:

Անհրաժեշտ եւ շոշափել նաև ռեվմատիզմի
հետևանքով տեղի ունեցած մահացություն-
ների հարցը: Այստեղ մի ավելորդ անգամ
ևս կհամոզվենք, թե վորքան լուրջ և հասա-
րակական կարևորություն ունեցող հիվան-
դություն եւ այդ:

Այսպես, Ամերիկայի և Անգլիայի տվյալ-
ներով, սուր ռեվմատիզմի բռնկումների հե-
տևանքով առաջացած մահացությունը նույն
հիվանդությամբ բռնված հիվանդների ընդ-

հանուր թվի կես տոկոսն եւ կազմում: Ուրիշ
խոսքերով, սուր ռեվմատիզմով հիվանդ 200
հոգուց 3-ը մահանում են:

Սակայն բացի սրանից, ռեվմատիզմի հե-
տևանքով մահանալու դեպքերի հաշվարկն
անելիս, մենք պետք եւ ուշադրության առ-
նենք նաև սրտի հիվանդության պատճառն
ու խիստ տարածված մահացությունների
դեպքերը, մահացություն, վորի ահագին մե-
ծամասնությունը ռեվմատիզմային հիվան-
դության հետևանքն եւ հանդիսանում: Մոտա-
վորապես ութը հոգուց մեկը մեռնում եւ
սրտի հիվանդությունից, իսկ այս ութ հո-
գուց չորսը — ռեվմատիզմային ձագում ունե-
ցող սրտի հիվանդությունից:

Այսպիսով, ռեվմատիզմն իր ամբողջ ծա-
վալով հանդիսանում եւ խսկական մի պա-
տուհաս և լուրջ սպառնալիք եւ ներկայաց-
նում ժողովրդական առողջության համար:

ՌԵՎՄԱՏԻԶՄՈՎ ՀԻՎԱՆԴԱՍԱԼՈՒՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԺՈՂՈՎՐԴԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՍ

Ռեվմատիզմով հիվանդանալու, ռեվմա-
տիզմի հետևանքով ինվալիդ դառնալու և
մահանալու վերաբերյալ այս բոլոր տվյալ-

Ներն արժանի յեն լուրջ ուշադրության։
Բայց նրանք ավելի մեծ նշանակություն են
ստանում այն ժամանակ, յերբ հաշվի առ-
նենք այն ահազին վնասը, վոր ոեվմատիզ-
մային հիվանդությունները հասցնում են
յերկրի ժողովրդական տնտեսությանը։

Այս վնասը կազմում էն հետեւյալ մոմենտ-
նեռը.

1) ոեվմատիզմով հիվանդանալու հետևան-
քով մեծ քանակությամբ գործալքումներ և
ժամանակավոր անաշխատունակության հա-
մար նպաստների վճարման ծախսեր.

2) պրոդուկցիայի թերարտադրում հի-
վանդության հետևանքով.

3) հիվանդացած բանվորին, կոլխոզնիկին
կամ ծառայողին բուժական ամեն տե-
սակ ոգնություն (ամբուլատորային, հիվան-
դանոցային, սանիտարա-կուրորտային) ցույց
տալու ծախքեր.

4) ինվալիդ ոեվմատիկներին կենսաթոշակ
հատուցանելու ծախսեր.

5) ժողովրդական տնտեսության յեկա-
մուտի կորուսաները՝ ինվալիդների թերաշ-
խատած տարիների պատճառով գոյացած։

Իբրև առանձին մի որինակ, կարելի յե-
մատնանշել, վոր 1932 թվին Հյուսիսա. կով-

կասյան (նրա այն ժամանակվա սահման-
ներում) յերկրամասը ոեվմատիզմային հի-
վանդությունների հետևանքով ժամանակա-
վոր անաշխատունակության 12 հազար բան-
վորական որվա կորուստ ե ունեցել։

Ինչ վերաբերում և ոեվմատիկ հիվանդների
բուժման համար յեղած ծախսերին, ապա
այստեղ բավական ե նշել բուժական միայն
մեկ տեսակ, այսինքն՝ սանիտարա-կուրոր-
տային ոգնության արժեքը։ 1925 թվին
ՌՍՀԽՀ-ի կուրորտներում 28 հազար հոգուց
ավելի ոեվմատիզմով հիվանդներ կային. Դը-
րանց բժշկությունը նոտել ե մոտ 6 միլիոն
ոուբլի, իսկ 1932 թվին այդ գումարը հա-
սել ե համարյա 50 միլիոնի։ Բացի գրանից,
ոեվմատիզմով հիվանդներն են, վոր ամեն-
քից շատ են հաճախում մեր քաղաքային
նեկտրա-ջրա. և ցեխաբուժարանները, վո-
րոնցից ոգտվելը բավական թանգ ե նըս-
տում։

Ահազին գումարներ են ծախսվում նաև
ինվալիդ-ոեվմատիկների պահպանության հա-
մար։ ԽՍՀՄ-ում տարեկան 700 հազար ոուբ-
լուց ավելի յե ծախսվում ոեվմատիզմի հե-
տևանքով ինվալիդ դարձածներին կենսաթո-
շակ վճարելու համար։ Յեթե հաշվելու լի-
շակ վճարելու համար։ Յեթե հաշվելու լի-

Նենք, վոր ինվալիդի կենսաթոշակով պահ-
փելու տևողությունը կազմում է 10 տարի,
ապա պարզ կլինի, թե վրապիսի բեռն են
ինվալիդ-ռեվմատիկները պետության համար:

ՌԵՎՄԱՏԻԶՄԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ռեվմատիզմի դեմ պայքարի անհրաժեշտությունն ըմբռնել ե ամբողջ աշխարհը: Այդ պայքարը պայմանավորվում է նրանով, վոր ռեվմատիզմը

1) չափազանց շատ տարածված հիվանդություն ե, վորով հիվանդանում են յերկու սեռի ամեն հասակի անձինք, բայց ամենից ավելի սաստիկ կերպով՝ 15 — 45 տարեկան հասակի մարդիկ.

2) պատճառում ե աշխատունակության ավելի յերկարատև կորուստ և համարյա յերբեք չի սահմանափակվում հիվանդության բռնկումով կամ սուր կերպարանք ստանալով.

3) շատ ծանր ընթացք ե ունենում մանկական վաղ հասակում և մեծ մասամբ հիվանդության հետքեր ե թողնում ամբողջ կյանքում.

4) սերտորեն կապված ե սոցիալ-պրոֆեսիոնալ պայմանների հետ:

Սկսած 1926 թվից, մի շարք յերկրներում կազմակերպվեցին ռեվմատիզմի դեմ պայքարելու հատուկ կոմիտեներ: Կազմված ե միջազգային հակառեվմատիկ միություն: Արևմտյան Յեվրոպայի և Ամերիկայի մի շարք պետություններում առանձին անհատ-ներ և խմբեր առավել կտրմ նվազ աշխատանք են տանում ռեվմատիզմի հիվանդությունների թիվը պակասեցնելու համար: Բայց այս աշխատանքը միայն կիսամիջոց ե: Յեկ լիովին հասկանալի յե. կապիտալիստական իրակարգի պայմաններում ռեվմատիզմը հանդիսանում է սոցիալական մի հիվանդություն, վորը հարվածում ե զիմավորապես շահագործվող աշխատավոր մասսաներին, մասսաներ, վորոնք նյութական զարութեալի կարիքի մեջ են ապրում: Այստեղ այս հիվանդությունը վոշնչանալ կարող ե միայն այս ժամանակ, յերբ վոշնչացած կլինի ինքը կապիտալիզմը, այսինքն՝ այս արմատները, վորոնցից ծնվում ե նա:

Բայց այն, ինչ վոր միանգամայն անկարելի յե անել կապիտալիստական տնտեսության պայմաններում, անպայմանորեն ու

մեծ հաջողությամբ հնարավոր ե անել Խոր-
հուրդների յերկրներում։ Միայն մեր Միու-
թյան մեջ ե, վոր պրոլետարիատը՝ իրակա-
նացնելով իր դիկտատուրան՝ լիբրավ տեր
ե հանդիսանում։ միայն մեզ մոտ ե, վոր
աշխատավոր մասսաներն ակտիվ մասնակ-
ցություն ունեն յերկրի կյանքի բոլոր ճյու-
ղերի կազմակերպության մեջ, մասնավորա-
պես նաև առողջապահության գործում։
Միայն այդ ե պատճառը, վոր մեզ մոտ լիո-
վին ապահոված ե մասսայական հիվան-
դությունների վերացման համար գործա-
դրվող միջոցառումների հաջողությունը, այն
հիվանդությունների, վորոնք մեզ ժառան-
գություն են մնացել ցարիզմից, նախկին
բուրժուական հասարակությունից, Առաջին
հնգամյակի ընթացքում աննախընթաց աճ
են ունեցել մեր Միության աշխատավոր
մասսաների համար բացված առողջապահ-
ական հիմնարկները։ Քաղաքներում և արդյու-
նաբերական կենտրոններում հիվանդանո-
ցային մահակների (կոյկաների) քանակն
ավելացել է 146 տոկոսով, իսկ գյուղերում —
188 տոկոսով։ սանատորիաների մահակ-
ների թիմս ավելացել է մի քանի անգամ։
1932 թվին բոլոր կուրորտներում բանվոր-

ները կազմում եյին բոլոր այնտեղ բժշկվող-
ների 65 տոկոսը, իսկ հետագա տարիներում
այդ տոկոսն ավելի ևս մեծացավ։

Առողջապահական բոլոր միջոցառումների,
ինչպես և բանվորական նոր բնակարան-
ների շինարարության, գործարանների ու
հանքահորերի վերակառուցման, հասարակա-
կան մննդառության բարեկավման, մեր Միու-
թյան աշխատավորների նյութական կենցա-
ղային բարեկեցության նշանավոր վերելքի
հետևանքով և, վերջապես, դեպի յուրաքան-
չյուր առանձին հիվանդը ցուցաբերված
ուշադիր ու հոգատար վերաբերմունքի հե-
տևանքով, — մենք ունեցել ենք մեծ նվա-
ճումներ այն պայքարում, վոր տարկում
թե ընդհանուր հիվանդացումների և թե հի-
վանդությունների առանձին տեսակների
իշեցման համար։

Ժամանակավոր անաշխատունակության
մասին յեղած տվյալները, վորոնք վերաբե-
րում են 100 հոգի յերկու սեռի ապահո-
վագրվածներին (Ուկրայինա) ըստ ամեն տե-
սակի հիվանդությունների, ցույց են տալիս,
վոր 1926 թվին հայթայիթող ալբյունարերու-
թյան յուրաքանչյուր 100 հոգուն հիվանդու-
թյան մոտավորապես 140 դեպք եր լինում, իսկ

1932 թվին — ընդումենը մոտ 100 դեպք,
այսինքն 30 տոկոս պակաս, իսկ անաշխա-
տունակ որերի թիվը իջել է 14 տոկոսով:
Մշակող արդյունաբերության մեջ անաշխա-
տունակ որերի թիվը պակասել է 25 տո-
կոսով: Այս թվերն ամենահամոզիչ կերպով
խոսում են այն մասին, վոր մեր արդյուն-
աբերական բանվորների միջև զգալի չա-
փով պակասել են ընդհանուր հիվանդու-
թյունները: Այս տարիներում զգալի չափով
պակասել են նաև ռեվմատիզմի հիվանդա-
ցումները:

Տարիներ	Հայթայթող արդյուն- աբերություն		Մշակող արդյուն- աբերություն	
	Հնդհ. հիվանդա- ցումներ	Ռեվմա- տիզմի հի- վանդա- ցումներ	Հնդհա- նուր հի- վանդա- ցումներ	Ռեվմա- տիզմի հիվանդա- ցումներ
1926	100	100	100	100
1927 . .	104	15	96	100
1928 . .	110	116	95	102
1929 . .	123	112	99	100
1930 . .	110	89	86	84
1931 . .	85	88	82	80
1932 . .	86	103	75	77

Բայց և այնպես ռեվմատիզմի հիվանդու-
թյունը մեզ մոտ գեռ շատ տարածված է,
հետևաբար և նրա դեմ պայքարը պետք է
տարվի յերկու ճակատում և զանազան ուղ-
ղությամբ: Հիվանդացումների դեմ պայքարի
լավագույն միջոցը նրանց կանխումն է: Այս
տեսակետից շատ կարևոր է վերացնել այն
բոլոր վնասակար պայմանները, վորոնք կա-
րող են նպաստել հիվանդության առաջա-
նալուն ու նրա զարգացմանը, ուրիշ խոս-
քով՝ պետք է ծավալել որինաչափ ջանք
աջևատանքի պայմանները յեզ կենցաղն
առողջացնելու համար: Առանձնապես կա-
րևոր է այս՝ արդյունաբերության այն ճյու-
ղերի համար, վորոնեղ աշխատանքի պայ-
մանները և արտադրական պրոցեսը յերբեմն
կարող են բարեհաջող լինել ռեվմատիզմով
հիվանդանալու:

Այսպես, որինակ, շատ կարևոր են ռեվ-
մատիզմի դեմ պայքարի այն միջոցառում-
ները, վորոնք տարվում են հանքագործ բան-
վորների միջև: Այստեղ առաջնակարգ դեր
են խաղում:

ա) միջանցուկ քամիների և ողի ջերմաս-
տիճանի շեշտակի փոփոխումների վերա-
ցումը կամ քչացումը աշխատանքի վայրում,

բանվորական, ինչպես և ոժանդակ շենքերում.

բ) թացության և խոնավության խսպառ կամ գեթ մասնակի վերացումը նույն տեղերից. այդ կարելի յե ձեռք բերել այնպիսի միջնորդական մերով, վորոնք արզելք են հանդիսանում հանքահորերի մեջ ջրերի ներս թափանցումը, կամ արդեն ներս հոսած ջրերն աշխատանքի վայրերից հեռացնելու մեջ.

գ) բանվորի բեռնաթափումն այնպիսի աշխատանքից, վորք ֆիզիկական մեծ լարում և պահանջում. դրա համար արտադրական ամենածանր պրոցեսները մեքենայացման յենթարկել:

Հեղափոխության տարիների ընթացքում արտադրության մեքենայացումը հանքահորերում ահազին աճ ե ունեցել, համարյա 90 տոկոսով ընդգրկելով ածխի և հանքաքարի հանույթը (փոխանակ 3 տոկոսի, վորմինչև Հոկտեմբերյան հեղափոխություններ): Հանքահորերի մեքենայացումը յերկորդ հնգամյակում համելու յե ավելի և բարձր աստիճանի (կոմբայնների կիրառումը) և այլն): Հսկայական նշանակություն ունի սուրերկոյա բանվորների աշխատանքի առող-

ջացման համար 6 ժամյա բանվորական որը վոր սահմանված ե նրանց համար:

Ուկմատիզմով հիվանդացումների դեմ հանքագործների միջև տարածվող պայքարում պակաս կարենոր գեր չեն խաղում նաև սոտորերկոյա «սպասարանները», վորոնք կառուցվել են հանքահորերում: Այս «սպասարանները» տաքացված են և վերելքի սպասող բանվորին հնարավորություն են տալիս գերծմնալու հանքահորի միջնորդով քամիներից ու ցրտից: Առողջապահական միջնորդական խոշոր տեղ են բռնում հանքահորերի կարգում խոշոր տեղ են բռնում հանքահորերում շինված կոմբինատները, վորոնք անմիջական կապ ունեն շախտի հետ: Բանվորն այնտեղ փոխում ե հագուստը, լվացման ու թարմացման դուշ և ընդունում է կարող ե հանգստանալ տուն գնալուց առաջ: Վերջապես, ուեվմատիզմի կանխման տեսակետից շատ մեծ նշանակություն ունի նաև այն, վոր բանվորներին տրվում ե արտադրական հագուստ և վունաման սահմանված նորմաների համաձայն:

Արտադրական պայմանների նույնականի սոցիալիստական վերակառուցում ե կատարվում մեր արդյունաբերության նաև այլ ճյուղերում: Ուկմատիզմի կանխման համար

շատ բան ե արված ԽՍՀՄ-ում մեքենաշինարարության մեջ և տրանսպորտում:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը և այն հանգամանքը, վորդյուղատնտեսական աշխատանքը դառնում են դուրստերիալ (արդյունաբերական) աշխատանքի մի այլ տեսակը, հավաստիացնում են, վորդ ուժմատիզմով հիվանդացումների մեծ թիվը գյուղացիական բնակչության միջև ևս մոտիկ ապագայում կիշնի:

Ամենամոտ տարիներում, առողջապահական այսպիսի ծավալուն աշխատանքի շնորհիվ, ապահովապես իսպառ կվերանան ցարական Ռուսաստանի ստեղծած այն բազմաթիվ պատճառները, վորոնք մասսայական հիվանդությունների և՝ սրանց թվում նաև ուժմատիզմի աղբյուր են ծառայում:

Մյուս ճակատամասը, ուր մենք հաջող պայքար ենք մղում ուժմատիզմի մեմ, — դա ածխատավորների կենցաղի հիմնական առողջացումն է: Այստեղ, առաջին հերթին, նկատի պետք ե ունենալ բնակարանային պայմանները: Կուսակցության 17. ըդ համագումարում արած իր գեկուցման մեջ ընկեր Ստալինը այս առթիվ ասաց. «Բուրժուական յերկրների բոլոր քաղաքների անխուսափելի

հատկանիշն են հանդիսանում խուլ վորջերը, քաղաքի ծայրամասերում գտնվող այսպիս կոչված բանվորական թաղերը, վորոնք ներկայացնում են մութ, խոնավ, մեծ մասամբ նկուղային, կիսաքանդ շենքերի կույտեր, վորտեղ սովորաբար պատսպարվում են չունեոր մարդիկ, վխտալով կեղտի մեջ և իրենց բախտն անիծելով: Հեղափոխությունը ԽՍՀՄ-ում առաջ բերեց մի դրություն, վորդ այդ վորջերը մեզ մոտ անհետացան: Նրանք փոխարինված են նոր կառուցված գեղեցիկ և լուսավոր բանվորական թաղերով, ընդ վորում շատ դեպքերում բանվորական թաղերը մեզ մոտ ավելի գեղեցիկ տեսք ունեն, քան քաղաքի կենտրոնները»:

Դոնբասի հանքագործները կապիտալիստներից ժառանգություն ստացան «Սորչևկան» (շնարնիկ), իր սոսկալի, ձիշտ-վոր շնաբույն բնակարաններով: Հոկտեմբերյան հեղափոխությանը հաջորդող տարիներում, բնակարանային հոյակապ շինարարությունը վերացրեց այս աղբանոցներն ու վորջերը: Ներկայումս Դոնբասում և Կրիվորժյում հանքահորերի բանվորները համարյա ամենուրեք ունեն չոր և տաք բնակարաններ, վորոնք կառուցված են կուլտուրական գե-

դատեսիլ, կանաչաղարդ բանվորական գյու-
ղակներում և պարտեզ քաղաքներում:

Մոսկայի բուժական հիմնարկների տը-
յալներով, համեմատած նորակառույց թա-
ղերում ուեվմատիզմով հիվանդացողների թիֆո-
զալի չափով նվազ ե, քան թե այն ու-
յոններում, վորտեղ բնակարանային շինա-
րարությունը թույլ ե զարգանում:

Աշխատավորների աշխատանքի և կենցաղի
պայմաններն առողջացնելու նպատակով գործ
դրված ջանքերի հետ միաժամանակ, մեր
կառավարությունը խոշոր գումարներ ե ծախ-
սում՝ ուեվմատիզմով հիվանդների բուժման
լավագույն ձեմքերը կազմակերպելու հա-
մար: Այս կողմից շատ ցուցանշական ե կա-
պիտակիստական գոչ մի յերկում չոենանված
այն թափը, վոր ցուցաբերվում ե՝ ուեվմա-
տիզմով հիվանդին սանիտարա-կուրորտային
ոգնություն հասցնելու համար:

1933 թվին կուրորտները և հանգստի տը-
ները մոտ յերկու միլիոն մարդ են ընդու-
նել, վորոնցից համարյա կեսը բուժվել ե
ձրիապես պետության, պրոֆմիության և
այլ կազմակերպությունների հաշվով: 1932
թվին կուրորտներում բժշկվել են մոտ 135

հազար հիվանդ ուեվմատիզմի այլ և այլ տե-
սակի հիվանդություններով:

Դրա հետ միասին, ԽՍՀՄ-ի բոլոր քաղաք
ներում, ուեվմատիզմով հիվանդների բուժումը
տարվում ե նաև տեղերում: Մոսկայում,
Լենինգրադում, Ռոստովում և այլ կենտրոն-
ներում կան ցեխաբուժաբաններ՝ բերովի
ցեխով, վորով հաջող կերպով ոգտվում
են ուեվմատիզմ ունեցող հիվանդները: Ուշա-
գրության արժանի յե նաև մետաղախարամի
(շակ) ջրերով կատարված բժշկությունը.
այդ խարամն ստացվում ե մետաղածուլա-
կան գործարաններում, վորպես կողմանկի
արտադրանք՝ խարամը հանգցնելիս: Բուժ-
ման այս բոլոր յեղանակները, վորոնցով կա-
րող ե ոգտվել հիվանդը կուրորտաներից գուրս,
շատ դեպքերում լիովին փոխարինում ե կու-
րորտային բժշկությանը:

Ուեվմատիզմի դեմ մղվող պայքարում ահա-
գին նշանակություն ունի նաև առողջ, ֆի-
զիկապես լավ զարգացած որգանիզմ, վոր
ընտելացած լիներ կլիմայական այլ և այլ
փոփոխություններին, յեղանակների աննպաստ
փոփոխություններին, վոր լավ տաներ ջեր-
մաստիճանի՝ արտադրական պրոցեսների հետ
կապված՝ տատանումները և, վերջապես, ըն-

գունակ լիներ վարակիչ հիվանդություններին դիմադրելու։ Բացառիկ դեր են խաղում այստեղ մարմինը կոփելը յեվ Քիզիկական մարզանեներ կատարելը՝ դեռ մատադ հասակից սկսած։

Բժշկի խորհրդով պետք ե դուշ ընդունել, մարմինը պաղ ջրով սրբել, ոգային վաննաներ անել, լողանալ, լող տալ, թիավարել և սպորտի այլ և այլ տեսակներով զբաղվել։ Բացառիկ կարեոր միջոցառումն ե բնակչության, մանավանդ մանուկ սերնդի լայն ներդրագումը ֆիզկուլտուրական պարագմունքների մեջ։

Դրա հետ միասին հարկավոր ե հատուկ ուշադրություն ցուցաբերել դեպի այն մարդը, վոր ուժվատիզմից առողջացել ե և վորին ուղղում ենք կամ ընդունում ենք այս կամ այն աշխատանքը տանելու։ Նրան հարկավոր ե այնպիսի պայմանների մեջ դնել, վոր նայենթարկված չլինի խոնավության, միջանցուկ քամիների, թացության և այն, և նրա հիվանդությունը նորից սուր կերպարանք չստանա։ Կարող են պատահել առանձին դեպքեր, յերբ հարկավոր ե լինում բանվորին կամ նոր աշխատանքի դնել, կամ ուրիշ լուսավոր, չոր և տաք շենք փոխադրել նրան։

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՌԵՎ-
ՄԱՏԻԶՄԻ ԴԵՐ ՄՊԱՌՈՒՄ

Այսպես, ուրեմն, ուժմատիզմի դեմ պայքարը պահանջում է մեծ գումար, մեծ եներգիա և մեծ նախաձեռնություն։

Ուժմատիզմի դեմ մղվող պայքարում պետք ե ներգրավված լինի մեր ամբողջ հասարակայնությունը, բոլոր բանվորներն ու կոլխոզական մասսաները, Գործարանում, ֆաբրիկում, կոլխոզում հարկավոր ե մեծ ուշադրություն նվիրել ուժմատիզմի դեմ մղվող պայքարի հարցերին։ Ուկրայինայում, Մուկվայում, Ուրալում և այլն մի շարք ձեռնարկություններում, կազմակերպված են այսպես կոչված հակառեվմատիզմային բրիգադներ, վորոնք բաղկացած են բանվորական ներկայացուցիչներից և իրենց գործունեյությամբ հենվում են բանվորական լայն ակտիվին։ Այդ բրիգադների խնդիրն ե, գլխավորապես, կազմել և կայսքի մեջ անցկացնել ունկալակային սահմարտական մինիմումը, վորն ընդգրկում է մոտավորապես հետեյալ հարցերը։ հիմնարկության նախապատրաստությունը ձմեռվա համար, վերացնել ցեխի անկանոն սարքավորումը, ցուրալ, խոնավությունը, միջանցուկ քամիները, չտաքացած

սրահները, ողափոխիչների անսարքիությունը, ապակեպատման թերությունները, շենքի թաց բաժիններում տախտակամածի բացակայությունը, ինչպես նաև արտվունամանի, արտհագուստի հայթայթման հարցերը և ուրիշ շատ հարցեր, վորոնք աշխատանքի բնույթից են կախված:

Հակառեվմատիզմային բրիգադն ոգնում ե հայտնաբերելու և ապա հաշվառքն անելու գործարանի բոլոր ոեվմատիզմով հիվանդներին, մասնակցում ե այն պայմանագրերը կազմելուն, վորոնք կնքվում են արտադրության վարչության և առողջապահական որդանների միջև՝ աշխատանքի պայմաններն առողջացնելու համար, և ապահովում ե ոեվմատիզմի գետ պայքարի համար գործադրված միջոցառումների կատարման վերահսկողությունը:

Յուրաքանչյուր աշխատավոր պետք ե ճիշի, վոր նիվանդությունը կանխելն ավելի հետք ե, քան թե նիվանդությունը բուժելը: Այս կանոնը վերաբերում ե նաև ոեվմատիզմին:

Այն բոլորից, ինչ վոր մենք վերեվում առացինք ոեվմատիզմի մասին, կարելի յեայն յեզրակացության դալ, վոր ոեվմատիզ-

մով հիվանդանալուց նախապահանվելու հաճար անհրաժեշտ ե.

Զգուշ լինել մարմինը հանկարծ պաղեցնելուց (կիսամերկ դուրս չգալ տաք ցեխից, բաղնիքից և այլն):

Խոնավ և ցուրտ յեղանակին առանց վոտնամանի չքայլել:

Թրջված հագուստն անմիջապես հանել, չորացնել. թաց հագուստով աշխատանքի չանցնել:

Դաշտային աշխատանքների ժամանակ, առանց փուլածքի, գետնի վրա չընել:

Հետեվել, վոր աշխատանքի շենքերում և բնակարաններում ողը կանոնավոր կերպով մաքրվի, խուսափել միջանցուկ քամիներից (ցեխում, բաղնիքում տամբուրներ շինել, ողանցքները, վերնափեղկերն ոգտագործել):

Խուսափել բնակելի շենքերի խոնավությունից, մաքուր պահել աշխատանքի տեղը:

Սիստեմատիկաբար պարապել ֆիզկուլտուրայով, վորն ամրացնում ե որգանիզմը և ավելի դիմացկուն ե դարձնում նրան հիվանդությունների դեմ:

Կոփել մարմինը՝ կանոնավոր կերպով ոգտագործելով բնության բնական ուժերը — արեվը, ողը և ջուրը:

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մենք տեսանք, վոր ու վմատիզմի ծավալումը մեր Միության մեջ չափազանց մեծ է թէ քաղաքի պրոլետարիատի և թէ գյուղական բնակչության միջև։ Այդ հիվանդությունների ժողովրդական անտեսությանը պատճառած վասները նույնպես բավական մեծ են։ Մենք հակայական հաջողություններ ունենք այնպիսի հիվանդությունների դեմ մեր մղած պայքարում, ինչպես են վեներական ախտը, տուբերկուլոզը, քաղցկեղը. այս հիվանդությունների դեմ մղված պայքարի փորձը հարկավոր ե փոխադրել նաև ու վմատիզմի ճակատամասը։

Այս ուղղությամբ աշխատանք արդեն տանում են առողջապահության որգանները։ Այլև շատ բան կա անելու։

Ամենամոտ տարիներում մենք պետք են հասնենք այնպիսի դրության, վոր մեր բանվորները, մեր կոլխոզները, աշխարհի յերեսին սոցիալիզմի առաջն յերկրի բոլոր քաղաքացիներն ամբողջ յերկրագնդի ամենից ապահոված, ամենից կուլտուրական յեվ ամենից առողջ մարդիկը լինեն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ ե ու վմատիզմը	3
Սուր և խրոնիկական ու վմատիզմի ընթացքը	14
Ու վմատիզմի բուժումը	27
Ու վմատիզմի տարածումը	32
Ու վմատիզմով հիվանդանալուց առաջացած ժողովրդական վասնը	39
Ու վմատիզմի դեմ պայքարը	42
Յեղակացություն	58



Отв. ред. А. Г. Яваков

Пом. техред. Д. М. Джинибалаян

Издание 422|4682. Об'ем 17^թ печ. листа. (33280 зн. в 1 п. л.)
Статформат А6-105x148. Упаковка картонная 00-11432. Тираж 1000 экз. Заказ
4543. Сдано в набор 20-IX-1935 г. Подписано в печать 7-X-1935 г.

Типография им. А. Мясникяна, Ростов на Дону.



ՀՀ Ազգային գրադարան



NL0289124

ԳԻՆԸ 35 ԿՈՊ.
Цена коп.

7377

110309

ՄԿ

На армянском языке

И. Л. ВЕКСЛЕР

РЕВМАТИЗМ И МЕРЫ
БОРЬБЫ С НИМ

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО
Ростов н-Д Буденновский пр. № 30

Գ. Ր. Ա. Գ. Ա. Հ Ե Ս Յ Ե
Առարտութեան, Մոսկվակայա, № 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿԱԿԳՈՑԵՆՏՐ)